ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-21/23

ք. Երևան «02» հունվ.2021 թ.

ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Բազարչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և "ԹԱԳ ՀԷՄ" ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Թագեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **329 600 / Երեք հարյուր քսանինը հազար վեց հարյուր** / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, բաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ	**«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ**
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4	ք.Երևան, Լենինգրադյան 31/7
ՀՎՀՀ՝ 00011624	
Հաշիվ՝«Ամերիաբանկ»Արաբկիր մ/ճ	«ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ, Սպանդարյանմ/ճ
16305810144 1	Հ/Հ 16047808168200
Տնօրեն Ա. Բաղդասարյան	ՀՎՀՀ 01232586
ստորագրություն	Տնօրեն Հ. Մազելյան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՎՀՀ 00011624 ՀԱՅԱՍՏԱՆ

«ТАГ ГЭМ» 01232586

Հավելված N 1
«02» հոկտ 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-21/23

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	24311114/1	ԾԾմբական թթու	ՌԴ	ԾԾմբական թթու մ.ա.հ	կգ	1000	10000	10	Կոմիտաս 49/4	10	1-ին մատակարարումը՝ 5կգ 20օրվա ընթացքում 2-րդ մատարակարարումը՝ 3 հատ հուլիսին
2	24311114/2	ԾԾմբական թթու	Գերմանիա	Ծծմբական թթու VWR	կգ	5000	25000	5	Կոմիտաս 49/4	5	1-ին մատակարարումը՝ 20օրվա ընթացքում
3	33621766/1	Աղաթթու	ՌԴ	Աղաթթու մ.ա.հ	կգ	1000	5000	5	Կոմիտաս 49/4	5	1-ին մատակարարումը՝ 3հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում 2-րդ մատարակարարումը՝ 1 հատ հուլիսին
4	24321860/1	Ազոտական թթու	ՌԴ	Ազոտական թթու մ.ա.հ	կգ	1000	2000	2	Կոմիտաս 49/4	2	1-ին մատակարարումը՝ 1կգպայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում 2-րդ մատարակարարումը՝ 1կգ հուլիսին
6	24311114/3	Ծծմբական թթու ֆիքսանալ	ՌԴ	Ծծմբական թթու ֆիքսանալ 1տուփում10 սրվակ	տուփ	4000	4000	1	Կոմիտաս 49/4	1	1-ին մատակարարումը՝ 1տուփ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում

7	33691842/1	Աղաթթու ֆիքսանալ	ՌԴ	Աղաթթու ֆիքսանալ 1տուփում10 սրվակ	տուփ	5000	5000	1	Կոմիտաս 49/4	1	1-ին մատակարարումը 1տուփ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
8	24311730/1	Կալիումի բիքրոմատ	ՌԴ	Կալիումի բիքրոմատ մ.ա.հ	կգ	5000	5000	1	Կոմիտաս 49/4	1	1-ին մատակարարումը 1կգ պայմանագրի կնքումից հետո 20օրվա
9	24311730/2	Կալիումի բիքրոմատ ֆիքսանալ	ՌԴ	Կալիումի բիքրոմատ ֆիքսանալ	տուփ	6000	6000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1տուփպայ մանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
10	24311360/1	Նատրիումի քլորիդ	ՌԴ	Նատրիումի քլորիդ բ.մ	կգ	1000	1000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1կգ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
11	24311710/1	Ամոնիումի մոլիբդատ	ՌԴ	Ամոնիումի մոլիբդատ	կգ	32000	32000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1կգ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
12	24411300/1	Երկաթամոնյումային շիբ	ՌԴ	Երկաթամոնյումային շիբ մ.ա.հ	կգ	6000	6000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1կգ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
13	24311530/1	Ջրածնի գերօքսիդ	ՌԴ	Ջրածնի գերօքսիդ 50%	լ	1200	1200	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
14	24411400/1	Ամոնիակ ջրային	ՌԴ	Ամոնիակ ջրային	լ	1200	1200	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը 1հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
16	33631140/1	Սուլֆասալիցիլաթթու	ՉԺՀ	Սուլֆասալիցիլաթթու	կգ	8000	4000	0.5	Կոմիտաս 49/4	0.5	մատակարարումը պայմանագրի կնքումից հետո 20օրվա

											ընթացքում
17	24321650/1	Գլիցերին	ՌԴ	Գլիցերին մ.ա.հ	կգ	1200	600	0.5	Կոմիտաս 49/4	0.5	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
18	33691817/1	pH-մետրի համար ստանդարտ տիտրեր	ՌԴ	pH-մետրի համար ստանդարտ տիտրեր 1 տուփում 6 սրվակ	տուփ	5000	5000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
19	24311261/1	Կծու նատրիում	ՌԴ	Կծու նատրիում Ոհիդրոքսիդ մ.ա.հ	կգ	1000	5000	5	Կոմիտաս 49/4	5	մատակարարումը՝ 3կգ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում2-րդ մատարակարարումը՝ 2կգ հուլիսին
21	24211240/1	Քացախաթթվական կապար	ՌԴ	Քացախաթթվական կապար ԳOUS1027-67	կգ	10000	5000	0.5	Կոմիտաս 49/4	0.5	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
22	24321570/1	Տրիլոն Բ	ՌԴ	Տրիլոն Բ Ոէթիլեներկամինաքառքացախաթթվական թթվի երկնատրիումական աղ	1	3000	3000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
23	33661114/1	Անիլին	ՌԴ	Անիլին	1	14000	14000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 40օրվա ընթացքում
24	33691144/1	Նատրիումի թիոսուլֆատ ֆիքսանալ	ՌԴ	Նատրիումի թիոսուլֆատ ֆիքսանալ, 1տ-10սրվակ	տուփ	5000	5000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
25	24321570/2	Տրիլոն Բ	ՌԴ	Տրիլոն Բ ֆիքսանալ 1	տուփ	5000	5000	1	Կոմիտաս	1	մատակարարումը՝

		ֆիքսանալ		տ-10 սրվակ					49/4		պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
26	33611430/1	Կալիումի յոդատ	ՌԴ	Կալիումի յոդատ KJO3	կգ	40000	40000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
27	33691858/1	Յոդի ֆիքսանալ	ՌԴ	Յոդի ֆիքսանալ 1 տուփ-10սրվակ	տուփ	30000	30000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
28	33691846/1	Լիմոնաթթու	ՌԴ	Լիմոնաթթու մ.ա.հ օրգ. բյուրեղ	կգ	1000	1000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
30	33611230/1	Zn մետաղական	ՌԴ	Zn մետաղական մ.ա.հ ԳOUS 989-75	տուփ	12000	12000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
31	15991700/2	Ֆիլտրի թուղթ	ՌԴ	Ֆիլտրի թուղթ	կգ	3500	7000	2	Կոմիտաս 49/4	2	մատակարարումը՝ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
33	33791300/1	Գլաններ չափիչ առանց շլիֆի	ՌԴ	Գլաններ չափիչ առանց շլիֆի 25 մլ	հատ	900	1800	2	Կոմիտաս 49/4	2	մատակարարումը՝ 2հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
34	33791300/2	Գլաններ չափիչ առանց շլիֆի	ՌԴ	Գլաններ չափիչ առանց շլիֆի 50մլ	հատ	1000	2000	2	Կոմիտաս 49/4	2	մատակարարումը՝ 2հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
35	33791300/3	Գլաններ չափիչ առանց շլիֆի	ՌԴ	Գլաններ չափիչ առանց շլիֆի 100մլ	հատ	1200	2400	2	Կոմիտաս 49/4	2	մատակարարումը՝ 2հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
36	33791300/4	Հարթահատակ կոնաձև կոլբա առանց շլիֆի	ՌԴ	Հարթահատակ կոնաձև կոլբա առանց շլիֆի 100մլ	հատ	900	4500	5	Կոմիտաս 49/4	5	մատակարարումը՝ 5հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում

37	33791300/5	Պետրիի թասեր	ՉԺՀ	Պետրիի թասեր 1անգամյա օգտագործման ստերիլ	հատ	65	65000	1000	Կոմիտաս 49/4	1000	մատակարարումը՝ 1000հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
38	38431700/1	Մոռի պիպետ	ՌԴ	Մոռի պիպետ 20մլ	հատ	1300	3900	3	Կոմիտաս 49/4	3	մատակարարումը՝ 3հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
39	38411200/1	Ջերմաչափ սնդիկային ТЛ-4	ՌԴ	Ջերմաչափ սնդիկային ТЛ-4	հատ	6000	6000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ 1հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում
41	38411200/3	Ջերմաչափ սնդիկային	ՉԺՀ	Ջերմաչափ սնդիկային 0-100 oC	հատ	4000	4000	1	Կոմիտաս 49/4	1	մատակարարումը՝ 2հատ պայմանագրի կնքումից հետո 20օրվա ընթացքում

Բոլոր ապրանքները պետք է ունենան պիտանելիության ժամկետի 2/3 դդ

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Հաշիվ՝ «Ամերիաբանկ»Արաբկիր մ/ճ
22163058101441

Տնօրեն Ա. Բաղարյան
_____
/անուն, ազգանուն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ

ք.Երևան, Լենինգրադյան 31/7

«ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ,
Սպանդարյանմ/ճ

22216047808168200

ՀՎՀՀ 01232586

Տնօրեն _____ Հ. Թադևոսյան

Հավելված N 2
«02» 06 2021թ. կնքված
ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԱՊՁԲ-21/23 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	24311114/1	ԾԾմբական թթու						5000		10000					10000
2	24311114/2	ԾԾմբական թթու						25000							25000
3	33621766/1	Աղաթթու						3000		5000					5000
4	24321860/1	Ազոտական թթու						1000		2000					2000
6	24311114/3	Ծծմբական թթու ֆիքսանալ						2000		4000					4000
7	33691842/1	Աղաթթու ֆիքսանալ						5000							5000
8	24311730/1	Կալիումի բիքրոմատ						5000							5000
9	24311730/2	Կալիումի բիքրոմատ ֆիքսանալ						6000							6000
10	24311360/1	Նատրիումի քլորիդ						1000							1000
11	24311710/1	Ամոնիումի մոլիբդատ						32000							32000

12	24411300/1	Երկաթամոնյումային շիբ						6000							6000
13	24311530/1	Ջրածնի գերօքսիդ						1200							1200
14	24411400/1	Ամոնիակ ջրային						1200							1200
16	33631140/1	Սուլֆասալիցիլաթթու						4000							4000
17	24321650/1	Գլիցերին						600							600
18	33691817/1	pH-մետրի համար ստանդարտ տիտրեր						5000							5000
19	24311261/1	Կծու նատրիում						3000			5000				5000
21	24211240/1	Քացախաթթվական կապար						5000							5000
22	24321570/1	Տրիլոն Բ						3000							3000
23	33661114/1	Անիլին						14000							14000
24	33691144/1	Նատրիումի թիոսուլֆատ ֆիքսանալ						5000							5000
25	24321570/2	Տրիլոն Բ ֆիքսանալ						5000							5000
26	33611430/1	Կալիումի յոդատ						40000							40000
27	33691858/1	Յոդի ֆիքսանալ						30000							30000
28	33691846/1	Լիմոնաթթու						1000							1000
30	33611230/1	Zn մետաղական						12000							12000
31	15991700/2	Ֆիլտրի թուղթ						7000							7000
33	33791300/1	Գլաններ չափիչ առանց						1800							1800

		շլիֆի													
34	33791300/2	Գլաններ չափիչ առանց շլիֆի						2000							2000
35	33791300/3	Գլաններ չափիչ առանց շլիֆի						2400							2400
36	33791300/4	Հարթահատակ կոնաձև կոլբա առանց շլիֆի						4500							4500
37	33791300/5	Պետրիի թասեր						65000							65000
38	38431700/1	Մոռի սպիպետ						3900							3900
39	38411200/1	Ջերմաչափ սնդիկային ТЛ-4						6000							6000
41	38411200/3	Ջերմաչափ սնդիկային						4000							4000

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»ՊԲԸ
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Հաշիվ՝ «ԱրմենտոմԲանկ»Արարկիր մ/ճ
ԲԻՆ՝ 16305810144 1

Տնօրեն ---------- Ա. Բալգարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ

ք.Երևան, Լենինգրադյան 31/7

«ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ,
Սպանդարյանմ/ճ
Հ/Հ 16047808168200
ՀՎՀՀ 01232586

Տնօրեն ---------- Հ. Թադևոսյան